Արցախին՝ ով ինչով կարող է

Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզին աջակցություն են ցույց տալիս «Լույս» արտադրական միավորման լուսատեխնիկական փորձնական գործարանի բանվոր-ծառայողները: Նրանք սննդամթերք են ուղարկել Արցախի Բերդաձոր և Վերին Շեն գյուղերի բնակչությանը: Եղբայրական օգնության ձեռք է մեկնվել նաև Ստեփանակերտի էլեկտրատեխնիկական գործարանի կոլեկտիվին: Նրան է հանձնվել 4 հազար ռուբլի գումար:

•°•

Մեր հայրենակիցներին օգնելու գործում իրենց լուման ունեն ոչ ոգելից ըմպելիքների գործարանի աշխատողները:

Ձեռնարկության սոցկուլտ միջոցների ֆոնդից 20 հազար ռուբլի տրամադրվել է արցախցիներին: 5 հազար ռուբլով օգնել է արհմիութենական կոմիտեն: Դրա հետ մեկտեղ, կոլեկտիվի նախաձեռնությամբ գերպլանային արտադրանքից շուրջ 4 հազար դեկալիտր «Պեպսի-կոլա» և «Ֆանտա» ըմպելիքներ են առաքվել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ:

•°•

Արցախին տնտեսական օգնության ձեռք է մեկնել նաև հանրապետության հացամթերումների մինիստրության վերանորոգման-մեխանիկական գործարանի կոլեկտիվը: Ձեռնարկությանը կից կոոպերատիվը զբաղվել է Ստեփանակերտի հացի գործարանի վերակառուցման, արտադրության տեխնիկական վերազինման, տեխնոլոգիական նոր սարքավորումների տեղակայման աշխատանքներով: Գրեթե ավարտվել է և շուտով կգործարկվի հացաթխման առաջին հոսքային գիծը:

Նմանատիպ երկու հոսքային գծերի գործարկումով հնարավոր կլինի օրական թխել 25—27 տոննա տարբեր հացատեսակներ:

Ստեփանակերտից հեռագրով շնորհակալություն է հայտնվել եղբայրական օգնության համար:

Գ. ՍԱԼՈՅԱՆ